

Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻԶ

731

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

ՅԵՎ

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

338.14

4-12

ԿՈՒՍՇԲԱՏ
ՅԵՐԵՎԱՆ — 1983

պիստ

17 FEB 2010

Լ. Մ. ԿԱԳԱՆՈՎԻՉ

338.14

4-12 *պ*

ԿՈԼՏԵՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՄՐԱՊԵՂՈՒՄԸ

ՅԵՎ

ԳԱՐՆԱՆԱՑԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

24.2.6
Ձեռագրի ձևով չմշակված ԿՈԼՏԵՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ
1933 թ. ՓԵՏՐՎԱՐԻ 16-ԻՆ:

1010
42702

431



11043
ԿՈՒՍՇՐԱՑ
ՅԵՐԵՎԱՆ—1933

6 MAY 2013



4303-91

I. ԿԱՏԱՐԵԼՈՎ ԿՆԳԱՄՅԱԿԸ, ՄԵՆԲ ԳԱՐՁԱՆԲ ԿԶՈՐ ՅԵՐԿԻՐ

Ընկերներ, վերջերս մեր կուսակցությունը և բանվորների ու կոլտնտեսականների միլիոնավոր մասսան, կենտրոնական կոմիտեի և կենտրոնական վեբհանգիչ Հանձնաժողովի պլենումում, ինչպես և խորհուրդների կենտրոնական նստաշրջանում ամփոփեցին մեր հսկայական հաղթանակների արդյունքները, 4 տարում կատարված հնգամյակի հաղթանակները: Ընկ. Ստալինին իր զեկուցման մեջ ամբողջ յերկրին և ամբողջ աշխարհին ցույց տվեց, թե ինչպես մենք մեր հետամնաց յերկիրը վերափոխեցինք կարճ ժամանակամիջոցում:

ԽՍՀՄ-Ն ՀԵՏԱՄԱՑ ՅԵՐԿՐԻՑ ՎԵՐԱԾՎԵՑ ՀԶՈՐ, ԱՌԱՋԱՎՈՐ, ԱՆԿԱՆ ՄԻ ՅԵՐԿԻՐ

Յեթե առաջ, մինչև հնգամյակը, մեզ անհրաժեշտ արդյունաբերական ապրանքների մեծ մասը, մանավանդ մեքենաները, սյուրպատը, տրակտորները և այլն մենք հարկադրված էինք ներմուծել արտասահմանից, այսինքն՝ մենք այդ բնագավառում կախում ունեյինք արտասահմանից, ապա այժմ արդեն ինքներս ենք արտադրում մեր թուղը և սյուրպատը, մեր ավտոմոբիլներն ու տրակտորները, մեր բարդ դարձյալները, արդյունահանում ենք նավթ ու ածուխ, արտադրում ենք քիմիական նյութեր, դրինակ՝ սուպերֆոսֆատ, վորն այնքան անհրաժեշտ է դյուղատնտեսության մեջ, վորպես պարարտանյութ:

Բացի դրանից, այժմ մենք արտադրում ենք նաև մեզ համար շատ արժեքավոր այլ առարկաներ՝ այնպիսի դեպքերի համար, յեթե մեր վրա հարձակվեն ոտարերկրյա կապիտալիստները: Այժմ մենք արտադրում ենք ինքնաթիռներ, տանկեր, զրահավանդներ, թնդանոթներ և այլն: Ընկերներ, կատարելով

հնգամյակը չսրս տարում, մենք Բուդյոննու հեծելազորին ավել-
լացրինք նաև տեխնիկական «հեծելազոր», թուղ, սողացող,
լողացող և ջրասույզ «հեծելազոր», վորը կկարողանա ջախջախել
թշնամուն, յեթե նա հանդգնի հարձակվել մեր սողալիստական
յերկրի վրա (բուռն ծափեր) :

Յեթե առաջ արտասահմանի բուրժուաները մեր յերկիրը
համարում եյին վայրենի, յեթե մեր յերկիրը մատով եյին ցույց
տալիս, թե ահա դոյություն ունեն յերկու մեծ յերկրներ՝ Չինաս-
տանը և Ռուսաստանը՝ և յերկուսն ել հետամնաց յերկրներ են, —
ապա այսոր արդեն այդպիսի խոսք չի կարող լինել մեր յերկրի
մասին : Մենք մեր պետական էությունը մեզ յերկրներն ենք
բանվորների ու դյուղացիների պետություն և մեր ծագման հենց
սկզբից մեր պետական կառուցվածքով շատ առաջ ենք յեղել և ենք
մյուս բոլոր յերկրներից, պետական ինչպիսի կառուցվածքով ել
քողարկված լինեն նրանք : Ինչո՞ւ : Հենց այն պատճառով, վոր
այնտեղ իշխանության գլուխն են կանգնած կապիտալիստները և
հողատերերը, իսկ մեզ մոտ բանվորա-դյուղացիական իշխանու-
թյուն է, սողալիստական իրավակարգ : Այսոր մեր սողալիս-
տական յերկիրը թե՛ իր տնտեսությամբ և թե՛ տեխնիկայով կանգ-
նած է աշխարհիս ամենազարգացած յերկրների ստալին շարքե-
րում :

ԻՆՏԵՆՍԻՎԱՅԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԽԱՂԱՂՈՒ- ԹՅՈՒՆ ԱՊԱՀՈՎԵՑԻՆ ՄԵՋ ՀԱՄԱՐ

Յեթե դեռ վերջին ժամանակներս իմպերիալիստական շատ
խմբակներ բացելիքաց արտահայտվում եյին մեր յերկրի վրա
հարձակվելու մասին, ապա այսոր բանվորների ու դյուղացիների
ամենավտեղիմ թշնամիները, այն թշնամիները, վորոնք ցան-
կանում են արյունով խեղդել մեր խորհրդային հանրապետու-
թյունը, հարկադրված են կեղծ հեղության ճառերով քողարկել
իրենց ատելությունը դեպի մեզ և հաշի առնել մեր հզոր ուժը :
Նրանք հասկանում են, վոր այժմ մեզ հետ կատակ անել չի կա-
րակ սպառազինում, այլ մենք ղինված ենք նաև պաշտպանության
տեխնիկական նոր դործիքներով՝ տանկերով ու ինքնաթիռներով :

Յեվ կարող ենք արտադրել պաշտպանության այդ բոլոր զենքերն
ավելի մեծ քանակությամբ, յեթե հարկավոր լինի : Մենք պա-
տերազմ չենք ուղում, սակայն յեթե կապիտալիստները մեզ վրա
բաց թողնեն իրենց ինքնաթիռները, տանկերը, ապա մենք անդեն
չենք այլևս, մենք կկարողանանք նրանց ինքնաթիռների դեմ բաց
թողել մեր ինքնաթիռները, նրանց տանկերի դեմ՝ մեր տանկերը,
նրանց զրահակիրների դեմ մենք առաջ կքշենք մեր սողալիստա-
կան հզոր զրահակիրների կալոնները (ծափեր) :

Ընկեր կոլտնտեսականնե՛ր և բանվորնե՛ր, տալով մեր հաղ-
թանակների հանրազումարները, մենք պետք է հիշենք մի բան՝
յեթե մենք չկարողանայինք կարճ ժամանակամիջոցում իրոք
բարձրացնել մեր արդյունաբերությունը, ապա այսոր ձեզ հետ
միասին չեյինք ունենա խաղաղ աշխատանք, այլ կունենայինք պա-
տերազմ, ինտերվենցիա, իմպերիալիստների հարձակում մեզ վրա
Արևմուտքից և Արևելքից :

Դուք բել եք մեր հեռավոր արևելյան հարեանների մասին :
Այնտեղ ևս կային այդպիսի խմբակներ, խմբակներ և վոչ թե
կապիտալիզմի լծի տակ հեծող ժողովուրդ, այնտեղ ևս կային
իմպերիալիստների, հարուստների, գեներալների խմբակներ, վո-
րոնք ուղում եյին և դեռ այժմ ել յերազում են հարձակվել մեզ
վրա :

Ի՞նչ եք կարծում ուրեմն, նրանք մեզ վրա չհարձակվեցին
մեր գեղեցիկ աչքերի համար, կամ թե չհարձակվեցին այն
պատճառով, վոր կապիտալիստները հասկացա՞ն, թե ուստական,
ուկրայնական և մյուս բանվորներն ու դյուղացիներն իրենց
կյանքն են կառուցում և իբր չպետք է խանդարել նրանց : Վոչ :
Այդ չե, վոր ուղում են նրանք : Նրանք ուրախությամբ կխանդա-
րեյին մեզ : Սակայն նրանք շատ լավ հասկանում են, վոր յեթե
հարձակվեյին մեզ վրա, ապա մենք դաժան հակահարված՝ կտա-
յինք նրանց, նրանք հասկացան, վոր մեր վառողանոցներում վա-
ռողն ավելացել է, վոր յեթե նրանք հարձակվեն մեզ վրա, ապա
մենք նրանց հախիցը կգանք (ծափեր) :

Հնգամյակը խաղաղություն ապահովեց մեզ : Իհարկե, կա-
րիք չկա, վոր մեզ որորենք : Պետք է հիշել, վոր իմպերիալիստ-
ները կարող են ամեն բոսկ հարձակվել մեզ վրա : Այդ պետք է

լավ հիշել և բացատրել բոլոր աշխատավորներին: Մեր դիմանա-
դետ ներկայացուցիչները հանդես են գալիս բոլոր ժողովուրդ-
ների առաջ՝ պայքար մղելով խաղաղության համար:

Յեթե աշխարհիս յերեսին կա աղնվորեն ու անկեղծորեն խա-
ղաղություն ցանկացող մի յերկիր, ապա դա միմիայն մեր սո-
ցիալիստական յերկիրն է: Մենք, ինչպես ասել ե ընդ. Ստալինը՝
«Ուրիշի հողից վաչ մի քիզ չեմք ուզում, բայց մեր հողից, մեր
հողից և վաչ մի քիզ վաչ-վաչի չեմք տա»: Մենք կառուցում ենք
մեր նոր, պայծառ կյանքը, մենք ձեռնամուխ ենք յեղել մեծ,
համաշխարհային դործի: Մենք ուղղում ենք ավարտել այդ դործը
հոգուտ բոլոր յերկրների աշխատավորների: Մենք պայքար ենք
մղում խաղաղության համար, պահանջում ենք զինաթափում:

Մենք մասնակցում ենք զինաթափման նիստերին մյուս
յերկրների հետ միասին: Այնտեղ մենք մերկացնում ենք մեր դա-
սակարգային թշնամիների բոլոր դավերն ու մեքենայություն-
ները: Այս դեպքում, իհարկե, մեզ համար միայն մերկացումը
չէ, վոր նշանակություն ունի: Մենք պայմանադրեր ենք կնքում՝
միմյանց վրա չհարձակվելու համար: Յեւ, ինչպես դեռեք, ար-
դեն չհարձակվելու այդպիսի պայմանադրեր ենք կնքել մի շարք
յերկրների հետ, վորոնց թվում նաև Լեհաստանի հետ: Ճապո-
նիան առայժմ դեռ չհարձակվելու պայմանագիր չի կնքում մեզ
հետ, սակայն յեթե նա խաղաղություն է ուղղում, ապա անխու-
սափելիորեն սլետք է հանդի դրան:

Ինչ բան է չհարձակվելու պայմանագիրը: Այդ նշանակում է,
թե մենք պայմանագիր ենք կնքում, վոր նրանց վրա չենք հար-
ձակվի, նրանք ել մեզ վրա չսլետք է հարձակվին: Դիմանադի-
ստորեն դա կոչվում է պայմանագիր, իսկ հասարակ լեզվով
կարելի յե ասել՝ մի մտնի մեր հողը, մեմք ել քո հողը չեմք
մտնի, յեքե մտնես մեր հողը՝ դնիք կտանք (բռնու ծափեր):

Մեր կուսակցությունը հանդես է գալիս վորոպես առաջամար-
տիկ բոլոր ճնշված ժողովուրդների ազատագրության համար
մղվող պայքարում: Մենք հանդես ենք գալիս ի պաշտպանություն
թույլ պետությունների: Կապիտալիզմի համար զեմար է հրա-
ժարվել կեղեքումից, իր դադանային շահագործիչ բնույթից:
Մենք ամենալայն մասսաներին, միլիոնավոր աշխատավորներին

ցույց ենք տալիս, վոր այդ բոլոր դատարկ-շահակրատող բուր-
ժուական դիմանադետները Ազգերի Լիգայի բանակից պարզապես
խաբում են ժողովուրդներին: Մեր որինակով մենք միլիոններին
համոզում ենք, վոր միմիայն կապիտալիզմի դեմ մղվող պայքա-
րում, միմիայն այն ժամանակ, յերբ ժողովուրդները մեր որի-
նակով կստեղծեն իրենց բանվորա-դյուղացիական հանրապետու-
թյունը, իրենց խորհուրդները, միմիայն այդ ժամանակ կատա-
րյալ խաղաղություն կհաստատվի յերկրիս յերեսին:

Մեր բայլեկիյան կուսակցությունը, մեր կառավարություն-
ը հմտորեն, խելացի, լենինաբար, իմաստուն կերպով առաջ ե
տանում խաղաղության իր հաստատուն քաղաքականությունը:
Ձե՞ վոր, ընկերներ, բարդ ու զեմարին խնդիր է դա: Այդ խն-
դիրը հեշտ չի լուծել: Մենք ամեն կողմից չընթացալուծ ենք
կապիտալիստական յերկրներով: Մենք թշնամիներ չատ ունենք:
Մեզ անհրաժեշտ է պաշտպանել մեր յերկիրը, այն ել վաչ թե
սովորական մի յերկիր, այլ սոցիալիստական յերկիրը, պետք է
պահպանել նրա պատիվը, մեր մեծ աշխատավոր ժողովուրդի պա-
տիվը, վորը պրոլետարական հեղափոխություն է կատարել և
հաստատել է պրոլետարիատի դիկտատուրա:

Չպետք է թողնել, վոր ուրիշները թքեն մեզ վրա և միեւնույն
ժամանակ պետք է խուսափել ընդհարումներից, առիթ չտալ
իմպերիալիստներին հարձակվելու մեզ վրա: Կուսակցությունը և
մեր կառավարությունն անչեղորեն կիրառում են այդ իմաստուն,
բարդ քաղաքականությունը, պահպանելով խաղաղությունը:
Մեզ պաշտպանում են բոլոր յերկրների միլիոնավոր աշխատա-
վորները:

Սակայն խաղաղությունը պահպանելու համար մենք չպետք
է բալիստանանք խաղաղության մասին խոսելով միայն: Ձի կա-
րելի ճոճել մերի ձեռները, աչքերը յերկիրք բարձրացնել կամ
խաղաղության «մաղթանքներ» կատարել: Ճառը ճառ է, իսկ մեր
կարմիր բանակի ուղիմական հզորությունն ամրացնելը մեր յերկ-
րի մարտական խնդիրն է, բոլոր բանվորների, կալուստեսական-
ների սրբազան պարտականությունը (յեկիարտես ծափեր):

Վերջին տարիներս, — իսկ շուտով մենք տոնելու յենք Կարմիր
բանակի 15-ամյակը, — մենք մեծամեծ հաջողություններ ձեռք

բերինք նրա հզորութեան ամրացման դործում: Այժմ մեր կարծիքը բանակը — և այդ կարող ենք մենք հպարտութեամբ ասել — հանդիսանում է և՛ զինված, և՛ կուլտուրական ուժ: Նա, բառիս բուն իմաստով, հանդիսանում է մեր հարազատ, արյունով ներկված, անծայրածիր, խորհրդային սոցիալիստական սահմանների վեժ պահապանը (ծափեր):

ՄԵՐ ՀԱՂՈՒՄԱԿՆԵՐԸ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՍՊԱՐԻՋՈՒՄ

Ինդուստրացման քաղաքականութեան մեծագույն հաջողութիւնները մեծ դեր խաղացին վոչ միայն բուն արդյունաբերութեան համար, վո՛չ միայն կարմիր բանակի համար, այլև մանավանդ մեծ նշանակութիւն ունի նրանք գյուղատնտեսութեամբ համար: Մեր գյուղատնտեսութիւնն այժմ արդեն այն է, ինչ վոր յեղել է առաջ: Նա ավելի ամուր է կապված արդյունաբերութեան հետ, մանավանդ նրա այն ճյուղի հետ, վորը մեքենաներ է պատրաստում: Մեզ մոտ գյուղատնտեսութիւնը շատ բարդացել է, և այստեղ ալիքի շատ գծավորութիւններ կան, քան արդյունաբերութեան մեջ:

Բարձրացնել արդյունաբերութիւնը, կառուցել նոր գործարաններ շատ ավելի հեշտ է, քան վերակառուցել գյուղատնտեսութիւնը, այն ել ինչպիսի գյուղատնտեսութիւն՝ մանր, ցիր ու ցան գյուղատնտեսութիւն, վորտեղ կային տասնյակ միլիոնաւոր մանրագույն, ցիր ու ցան, դաճաճային գյուղացիական տնտեսութիւններ:

Յեւ մենք հաջողութիւն ձեռք բերինք: Այժմ մենք ունենք ավելի քան 200 հազար կուլտուստայիւն, 5.000 խոշոր խորհուրդ տնտեսայիւն: Յեւ շնորհիւ արդյունաբերութեան զարգացման՝ մեզ հաջողվեց հակայական քանակութեամբ գյուղատնտեսական մեքենաներ տալ այդ խորհրդատնտեսութիւններին ու կոլտնտեսութիւններին: Յեւ աչքի առաջ ունեցե՛ք՝ վոչ թե հասարակ, այլ բարդ մեքենաներ, վոչ թե ձիաքարշ, այլ տրակտորաքարշ մեքենաներ:

Նախքան Քանրամասն քննելու թե ի՞նչ ենք նվաճել մենք ձեզ հետ, ի՞նչ ունենք մենք գյուղատնտեսութեան մեջ և դեռ ի՞նչ չունենք, թույլ տվե՛ք կանգ առնել մի շատ կարեւոր ու մեծ

հարցի վրա: Այդ հարցը ծագում է այն մարդկանց մոտ, վորոնք չեն հասկանում կոլեկտիվացման քաղաքականութեան մեծ նշանակութիւնը: Չհասկացող մարդիկ կան և դիտաւէշաների մեջ, կան նաև գյուղացիներ մեջ:

Ի՞նչ են նշանակում այն մեծ հաղթանակները, վոր ունենք մենք այժմ գյուղատնտեսութեան ասպարիզում: Մենք այնքան վարժվել ենք դրանց, վոր դժվար է նույնիսկ միանգամից գնահատել դրանք: Դրանք կարելի չէ գնահատել միմիայն այն ժամանակ, յերբ մենք վերհիշենք, թե ի՞նչ է յեղել մեզ մոտ գյուղատնտեսութեան մեջ առաջ, յերբ վերհիշենք, թե ինչպիսի գյուղացիութիւնը պայքար եր մղում հողի համար: Միմիայն վերհիշելով այդ, կարելի չէ հասկանալ էդիտիվացման մեծ նշանակութիւնը, գյուղատնտեսութիւնը սոցիալիստական ձևով վերակառուցելու համար մեր մղած ամբողջ պայքարի նշանակութիւնը:

Յեւ այստեղ նախ և առաջ ծագում է յերբեմն այսպիսի հարց՝ կարելի՞ յեր արդյոք յոյա գնալ առանց կոլեկտիվացման, կարելի՞ յեր արդյոք գործը կազմակերպել այնպես, վոր քաղաքում սոցիալիզմ կառուցվեր, վոր այնտեղ լուսավորեք երկիրականութիւնը, կառուցվէին գործարաններ, արտադրվէին մեքենաներ ու ավտոմոբիլներ, իսկ գյուղում թողնէինք հին, մանր, գյուղացիական անհատական տնտեսութիւնները:

Կան մարդիկ, վորոնք սխալմամբ կարծում են, թե կարելի յէ գործը տանել առանց կոլեկտիվացման, վորոնք մտածում են, թե՛ ինչ-վոր կոլեկտիվացում են հնարել բայելեկները: Սխալ է այդպես մտածել: Կոլեկտիվացումն ուղղակի կենսական անհրաժեշտութիւն էր, առանց դրան մենք չէինք կարող ապրել այլևս: Թույլ տվե՛ք լուսաբանել այդ հարցը մեր պայքարի պատմութեան հիման վրա:

II. ԻՆՉՊԵՍ ԲԱՅԼՇԵՎԻԿՆԵՐԸ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՀԱՅՅՈՐՆ ԳՅՈՒՂԱՏՆՈՒԹՅԱՆԸ

ՆՈՐ ՏԵՆԵՆԻԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վերջին դարը, մանավանդ վերջին տասնամյակներն աչքի յեն ընկնում նրանով, վոր լայն չափով զարգացավ տեխնիկան, սկսեցին կառուցվել նոր մեքենաներ, հրապարակ յեկան տրակտորներ,

սկզբնեց կոմբայններն և գյուղատնտեսական այլ բարդ մեքենաներն արտադրութիւնը: Մանդաղին փոխարինում և կոմբայնը, կալիֆ շէֆայնն փոխարինում և կալիֆ մեքենան, արորին փոխարինեց արաւիտորը:

Ի՞նչ և նշանակում տեխնիկայի այդ բուն դարգացումը: Անսպասելի հակադաս տեսլանքաց: Սակայն այդ առաջնութեան նշանակում և, վոր այժմ արդեն, յերբ տրակտոր կա, անկարելի չէ հերկել 2—3 հեկտար փոքրիկ հողամասը: Փանի վոր տրակտոր կա, նշանակում և մահ միջառահմանիմ: Տրակտորը մահվան դասավէժ և հայտարարում միջասահմանին, հողերի ցերուցանութեանը, փոքրիկ հողամասերին: Ուղեւորուկեա կոմբայնը մահ և բերում միջասահմանին, վորովհետեւ կոմբայնը ինքը համարյա նույնքան հող և բուռում, վորքան ունեցել են գյուղացիներէր վորմանը հեղափոխութիւնից առաջ: Մեկ-երկու անգամ պտտեցիր՝ մեկ էլ տեսար հասել ես միջասահմանին, հողաչերտն արդեն վերջացել և, իսկ նրա հետեւ արդեն ուրիշ սեփականութիւնն և, ուրիշ հողամասը:

Տեսե՛ք, թե ի՞նչ և կատարվում արտասահմանում, նույնիսկ այնտեղ, վորտեղ շատ աղակտորներ կան: Այնտեղ մանր գյուղացիական տնտեսութիւններում դուք տրակտորներ, կոմբայններ, մեծ կալիֆ մեքենաներ չեք գտնի: Նույնիսկ Ամերիկայում, գովմած Ամերիկայում, միայն ամենից ավելի հաբուստ Ֆերմներներն 18 տոկոսը տրակտոր ունեն: Յեւ այդ տրակտորները հետու յեն լիովին ողտագործվելուց: Որինակ՝ Պրանսիայում կոմբայնը զբիթ բոլորովին անմանութ և:

Ինչո՞ւ չէ այդպէս: Հենց այն պատճառով, վոր մանր գյուղացիական տնտեսութիւնները չեն կարող դնել այդ մեքենաները: Մանր տնտեսատերերի դրամադրութիւնը հերիք չի գալիս, փող չկա նրանց մոտ մեքենաներ դնելու համար:

Նրանց մոտ տիրում և հողի, մշակման բոլոր գործիքների մանր մասնավոր սեփականութիւնը: Ահա թե ինչո՞ւ, չնայած գյուղատնտեսութիւնը բոլոր արտադրութիւններէր ամենահետամնաց ճյուղն է, բայց և այնպէս գիտութեան ու տեխնիկայի նվաճումները ամենից թույլ չափով են արմատանում գյուղատնտեսութեան մեջ: Այդ պատճառով էլ գյուղատնտեսութեան մեջ

մանր տնտեսատերերի մոտ չափազանց ցած և լինում աշխատանքի արտադրողականութիւնը:

Ի՞նչն և խանգարում բարձրացնելու աշխատանքի արտադրողականութիւնը: Հողի մասնավոր սեփականութիւնը: Դա գլխաւոր և հիմնական պատճառն է: Հողի այդ մասնավոր սեփականութիւնը խանգարում և գործածելու նոր մեքենաներ, լայն ողտագործելու պարարտանյութերը: Նա խանգարում և աշխատանքի արտադրողականութեան բարձրացմանը գյուղատնտեսութեան մեջ, զանդաղեցնում և գյուղատնտեսութեան դարգացումը համեմատած՝ որինակ՝ արդյունաբերութեան հետ:

Սակայն վորն է յեկը: Յեկը գյուղատնտեսութեան խոշորացումն է: Կապիտալիզմը դարգանալիս՝ ստեղծվում է յին նոր քաղաքներ, կառուցվում է յին նոր խոշոր գործարաններ: Կապիտալիզմին հումք եր պետք: Նրան բանվորական ձեռքեր է յին պետք: Իսկ մանր գյուղացիական տնտեսութիւնը չէր կարող տալ այդ բաները: Ահա թե ինչո՞ւ կապիտալիզմի դարգացումը մղում էր գյուղատնտեսութիւնը դեպի խոշորացման ուղին:

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐԱՅՄԱՆ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՈՒՂԻՆ

Վոր գյուղատնտեսութեան խոշորացումն անխուսափելի չէ, պարզ և ամեն մեկի համար: Մարդկութիւնը, վորի դարգացումն առաջ և գնում արագ տեմպով, թողնել առանց պարենային ու հումքային պաշարների, չի կարելի: Իսկ միասնական մարդկութիւն չկա, կան դասակարգեր, տիրապետող դասակարգեր և ճնշված դասակարգեր: Մենք պրոլետարական հեղափոխութեան կատարեցիք: Մեզ մոտ իշխում են բանվորներն ու գյուղացիները: Մեզ մոտ բայլչեիկների ղեկավարութեամբ կաղմակերպվեց խորհրդային պետութիւն, մեզ մոտ չկա աշխատավոր մասնաւորի ճնշում ու չահագործում, մենք աղատադրվել ենք ճնշողներից ու չահագործողներից:

Սակայն կապիտալիստական հասարակութեան մեջ իշխում են կապիտալիստները, այնտեղ իշխում և նա, ով վորպիս մասնավոր սեփականութիւն՝ ունի մեքենաներ ու գործարաններ: Նրանք ճնշում են բանվորներին ու աշխատավորներին: Վորն է ուրեմն

կապիտալիստներին ուղին դյուղատնտեսութեան մէջ: Դուք յերևի լսել եք Կարլ Մարքսի մասին և տեսել եք նրա պատկերները, սակայն վոչ բոլորդ դիտեք, վոր բոլոր աշխատավորների այդ մեծ ուսուցիչն զբաղվել է դյուղացիական հարցով և քրտի ցավով նկատագրել է դյուղատնտեսութեան կապիտալիստական խոշորացման ճանապարհին դյուղացիութեան կրած բոլոր տառապանքներն ու օտարաբնակները: Շուտով լրանալու յե այդ հանձարեղ մարդու և դիտնականի մահվան հիսնամյակը: Նա 80 տարի առաջ, ինչպես մեր եպոխայում Լեհինը և Ստալինը, իր ընկեր Բնգելսի հետ միասին ուսումնասիրել է դյուղացիութեան կյանքը, դիտեր այդ կյանքը և նկարագրել է այն: Յեվ ահա, Կարլ Մարքսը, հեղափոխական այդ մեծ դիտնականը, դրել է փայլուն եջև՝ լի ատելութեամբ դեպի կապիտալիստները, դեպի նրանց ճնշումն աշխատավորների նկատմամբ: Նա նկարագրել է, թե ինչպես անդլիական կապիտալիստները խոշորացնում էին դյուղատնտեսութեանը, ինչպես էին վոչնչացնում նրանք մանր դյուղացիներին, վոչնչացնում էին բառացի, Փիլիկայես, դուքս էին վոնդում նրանց սեփական հողից, խլում էին այդ հողն իրենց վոչխարաբուծութեան համար, կտրում և ցանկապատում էին համայնական հողերն իրենց կալվածատիրական ունեցվածքների համար, խլում և հափշտակում էին դյուղացիական հողերը և զարմնում իրենց սեփականութեանը:

Հարյուրավոր տարիներ գյուղացիութեանը տառապում էր, ամբ ու գրկանքներ եթ կրում: Նա այսօր էլ կապիտալիստական յերկրներում տառապում է դաժանագույն մգնածամից, վորը չխնայեց և առանձնապես դաժանորեն հարվածեց կապիտալիստական յերկրների դյուղատնտեսութեանը: Այնտեղ այժմ կան տառապանքի միլիոնավոր դործագուրկներ, վորոնք մեռնում են սովից: Այնտեղ կան նաև ճգնաժամից քայքայված, աղքատացած, ճգնաժամից կործանվող տասնյակ միլիոնավոր դյուղացի ֆերմերներ:

Գերմանիայում 7 կալվածատեր ունեն վորպես սեփականութեան թյուն 772 հազար հեկտար հող, մինչդեռ միևնույն ժամանակ 5 միլիոն դյուղացիներ ունեն 1-588 հազար հեկտար հող. այլ խոսքով՝ մի խոշոր կալվածատեր ունի նույնքան հող, վորքան ունեն 350 հազար դյուղացի: Յեվ այժմ, յերբ Գերմանիայի դյուղ-

դացիները քայքայվել են ճգնաժամից, բուրժուական պետութեան ոգնութեան և ցույց տալիս վոչ թե այդ դյուղացիներին, այլ հենց այդ խոշորագույն կալվածատերերին: Հենց նրանց համար և բաց թողնվել մի քանի միլիարդ մարկ:

Գյուղատնտեսութեան ճգնաժամը համակել է վոչ միայն Յեվաքոպյի յերկրները, վոչ միայն այնպիսի յերկրներ, ինչպիսիք են Լեհաստանը, Չեխո-Սլովակիան, Ավստրիան, Ռումինիան, այլև մի ժամանակ վորպես հարուստ գովված Ամերիկան, ինչպես և Ճապոնիան:

Իսպանիան է, յեթե ասենք, վոր Ամերիկայում ցորենի ցանքերը վերջին յերկու տարում կքնատվել են 10 տոկոսով, իսկ ցորենի ընդհանուր բերքը՝ 20 տոկոսով: Ավստրալիայում միայն վերջին տարում ցանքերի տարածութեանը կրճատվել է 15 տոկոսով, Ռումինիայում՝ 17 տոկոսով: Կապիտալիստական յերկրներում մթերքը վաճառելու տեղ չկա: Նրանք կրճատում են ցանքերը, մշակում են պակաս ցանելու «պլաններ»: Շնորհիվ կապիտալիստական տնտեսավարութեան, տասնյակ միլիոնավոր մարդիկ բաց թափորեն մահացման են դատապարտված:

Չարմանալի չէ, վոր այժմ Ամերիկայում մաղթանքներ են կատարում յեկեղեցիներում, վոր աստված յերաջտ ուղարկի Դուք գիտեք, վոր մի ժամանակ Ռուսաստանում տերտերները մաղթանք էին կատարում անձրևի համար, իսկ այնտեղ այժմ մաղթանք են կատարում յերաջտի համար: Ինչո՞ւ: Հենց այն պատճառով, վորպեսզի ավելորդ մթերք չլինի, այլապես կնվազեն կապիտալիստների շահույթները: Վոչ թե այն պատճառով, վոր այդ մթերքները շատ են աշխատավորների համար: Վո՛չ, աշխատավորները սովի յեն յենթարկված: Սակայն մթերքը շատ է և մրցութեանը նվազեցնում է կապիտալիստների շահույթը: Կալվածատերերին ու կապիտալիստներին ծառայող տերտերները մաղթանքներ են կատարում, վորպեսզի յերաջտ լինի: Թերևս կարելի կլինի այդ մաղթանքների համար ուղարկել նրանց մեր դործագուրկ տերտերների զգալի մասը (ծիծաղ, ծափեր): Նրանք արագորեն կհարմարվեն ամերիկյան կապիտալիստներին, կվերահասուցեն իրենց մաղթանքները և փոխանակ աստծուց անձրև խնդրելու, կսկսեն յերաջտ խնդրել (ծիծաղ):

Այստեղ յեւ մանրամասնորեն չեմ լուսարանի այն պատկերը, վարը գոյութիւն ունի այժմ արտասահմանում: Վերջերս «Պրավդայում» հրապարակված եյին մի շարք գյուղացիների թղթակցութիւններ ու նամակներ Լեհաստանից, Ամերիկայից և այլն: Այդ թղթակցութիւններում նրանք նկարագրում են, թե ինչպիսի ծանր դրութեան մեջ են, — և վոր գլխավորն է, վորքան խալաք է նրանց ապագան: Կապիտալիզմի պայմաններում նրանք յեւ չունեն:

Մեզ մոտ եւ լինում են գլխավորութիւններ: Սակայն մեր գլխավորութիւնները միանգամայն տարբեր բնույթ ունեն: Մեր գլխավորութիւնները կապված են մեր ամենահետ, նոր կյանքի հակայարկան շինարարութեան հետ: Ամեն մի գյուղացի տուն կառուցելիս զիտե, վոր նա տուն է կառուցում վոչ թե այն պատահառով, վոր քայքայվել է, այլ այն պատճառով, վոր բարեկեցութեան է հասել: Քանի նա կառուցում է տունը, իհարկէ, վորոչ գլխավորութիւններ է կրում: Յերբմն նա հարկադրված է լինում կովն եւ վաճառել, շինանյութ գնելու համար, կտուրի համար յերկաթ գնելու նպատակով: Սակայն նա զիտե, վոր կունենա կարգին լուսավոր տուն, վորտեղ կապի բոլորովին այլ կերպ, նոր ձևով: Իսկ մենք չե՞մ վոր ձեզ հետ միասին կառուցում ենք վոչ թե սոսկ գյուղացիական մի տուն, այլ սոցիալիզմի մեծ շէնքը: Ահա թե ինչո՞ւ մեր գյուղացին կենսալիս ներկա է պայծառ ապագա ունի:

Նա, մեր գյուղացին զիտե, վոր այդ ապագան կախված է հենց մեզանից, մեր կամքից ու յեռանդից, մեր հմտութիւնից: Իսկ այնտեղ, վորտեղ գտնվում են կապիտալիստներն ու կապիտալիզմը: Կապիտալիստական յերկրների գյուղացիների առաջ այսօրեւ է դրված հարցը՝ կամ մահ, կամ ընթանալ մեր՝ ուղիով, տապալել կալվածատերերին ու կապիտալիստներին, և այն ժամանակ ստանալ նոր, պայծառ կյանք (ծափեր):

Կապիտալիստական յերկրներում աճում է լայնանում է բանվորների ու գյուղացիների հեղափոխական շարժումը: Իհարկէ, կապիտալիստները դեռ թմրեցնում են շատերին: Այժմ նրանք կազմակերպում են ֆաշիստական կուսակցութիւններ, վորոնք քողարկվում են սոսա՞ող, խարեւոյական խոստումներով: Նրանք

նույնիսկ անվանում են իրենց, որինակ՝ նացիոնալ-սոցիալիստներ, իսկ իրականում իսկական դադաղած բուրժուայներ են, վորոնք խաբում են գյուղացի ու աշխատավոր մասսաներին:

Սակայն այնտեղ աճում է ամբողջում է մի այլ ուժ, մեր բայլիսիկյան կուսակցութեան ուժը, վորը հաստատապես, հեղափոխականորեն, համառորեն կանգնած է իր պոստում, բացատրում է բանվորների ու գյուղացիների մասսաներին, կազմակերպում է, պայքարի յե կոչում նրանց կապիտալիզմի դեմ: Այսօր դեռևս նրանց ուժը չի պատում կապիտալիստներին ու կալվածատերերին տապալելու: Սակայն մենք զիտենք, վոր մոտենում է հեղափոխական հաղթանակի ժամը համայն աշխարհում: Նրանք ձեռք կբերեն նույնպիսի հաղթանակներ, ինչպիսին ձեռք ենք բերել մենք:

Բուրժուական զիտնականները հեղափոխութիւնից սարսափահար՝ դրութիւնից յեւք են փնտոում, փորձում են կիբառել պլանայնութիւն, դբաղվում են տնտեսութեան «պլանավորմամբ», սակայն այդ «պլանից» վոչինչ չի դուրս գալիս նրանց մոտ: Ինչո՞ւ բան չի դուրս գալիս: Ձի դուրս գալիս այն պատճառով, վոր կապիտալիզմի պայմաններում, հողի, դործարանների, մասնավոր տնտեսականութեան պայմաններում վոչ մի միասնական պլան չի կարող լինել: Մեկն արտադրում է այսքան, մյուսն աշխատում է նրան դերազանցել: Մրցութիւնն ու ձգնաժամերն անխուսափելի յեն, տնտեսութեան անկումն առաջ է գալիս այդ տնտեսութեան դարգացումից: Դա արդեն կապիտալիստական դարգացման որենքն է, վոր ապացուցել է կյանքը:

Ամերիկայի զիտնականները ջանք են թափում, բայց պլան չի դուրս գալիս նրանց մոտ, իսկ մեր յերեկվա մենատնտես, այսօրվա կոլտնտեսական Միտյոխայի մոտ կոլտնտեսութեան պլանավորումը հաջողվում է (ծիծաղ): Նա կազմակերպում է իր պլանը, կոլտնտեսական պլանը: Ձիչտ է, դեռ վոչ միչտ լավ, սակայն արդեն լավ որինակներ չատ կան: Յես տեսա, որինակ, թե ինչպիսի մի անկուսակցական, Կարմիր բանակի նախկին դատակալատ, Հյուսիսային Կովկասի Սոյսկի շրջանի Շարլիյիսկի գյուղում կարողացել է լավ կազմակերպել իր արտեղը: Նրա մոտ պատից կալված է արտադրական պլանը:

Նա ամեն ինչ մտածել է ուրվադձել է ամենայն մանրամասն-

նությամբ: Նա կարողացել է խոսնել հնձել ժամանակին, և բան-
ջարանցի բերքը հավաքել և բերք ստանալ: Նա կարողացել է
կատարել նաև իր պարտավորությունները պետություն հանդեպ
և քանջարեղեն վաճառել շուկայում, գարգացնելով կոլտնտես-
կան առևտուրը: Փող ստանալով, նա վճարել է իր պարտքերը:
Նա մեղ ցույց տվեց, թե՛ «ահա իմ ունեցած մնացորդը, ահա
այսքան շահույթ եմ ստացել»: Գլխավորներն դա կոչվում է սալ-
դո և բալանա: Իսկ նա ունի յուրովի արտահայտություն՝ փոխա-
նայի բալանա տանլու, նա ասում է «բալանեց» (ծիծաղ), և
բ՛յնուամենայնիվ նրա մոտ պլանը ավելի լավ է դուրս դալիս,
ան ամերիկացիներին մոտ (ծափեր):

Ընկերներ, յես ձեզ համառորակի պատմեցի գյուղատնտեսու-
քյան զարգացման կապիտալիստական ուղու մասին: Բոլորի հա-
մար պարզ է, վոր այդ ուղին մեզ համար չէ: Յուրաքանչյուր
բանվոր, յուրաքանչյուր գյուղացի կմերժի այդ ուղին: Փորձե-
ցե՞ք մեր չքավոր և միջակ գյուղացուն առաջարկել վերադառնալ
գյուղատնտեսության զարգացման կապիտալիստական ուղին:
Փորձեցե՞ք և կտեսնե՞ք, թե ինչ կապտասխանի դրան: Նա կառի՝
վոչ, շնորհակալ եմ, տանջվեցինք կապիտալիզմի լծի տակ, շատ
դոհեր տվինք, իսկ այժմ մենք բրա՛կ ենք հանել կապիտալիստա-
կան ուղին, դուրս ենք թափել աղբանոցը:

Իսկ վորպեսզի նա աղբանոցից վտտի չկանգնի, ինչպես աղ-
բանոցից աչխատում են վտտի կանգնել կուլակները, սպեկուլյանտ-
ները և այլ սրիկաները, մենք խորը փոս ենք փորում և այդ փոսի
մեջ շատ խորն ենք թաղում մեր թշնամիներին և դերան ենք
խփում նրա մեջ, վորպեսզի նրանք այլևս չվերադառնան և իրենց
մտքովը չանցկացնեն բերել մեզ իրենց հետ կապիտալիստական
այդ ուղին (ծափեր):


ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ
ՈՒՂՈՒ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Մենք, ընկերներ, ընտրել ենք գյուղատնտեսության խոշորաց-
ման սոցիալիստական ուղին: Գյուղացիությունը զարգացման սո-
ցիալիստական ուղիով տանելու համար անհրաժեշտ էր անցնել մի
չարժ աստիճաններ: Իսկույն վեր չես թուչի: Անհրաժեշտ էր նախ

նախապատրաստել հեղափոխության հաղթանակը: Յերկրորդ՝
անհրաժեշտ էր նվաճել իշխանությունը և պաշտպանել այդ իշ-
խանությունը քաղաքացիական պատերազմում: Յերկրորդ՝ անհրա-
ժեշտ էր վերականգնել իմպերիալիստական ու քաղաքացիական
պատերազմներից զայլալված տնտեսությունը: Չորրորդ՝ անհրա-
ժեշտ էր տնտեսությունը վերականգնելուց հետո ձևափոխու-
լինել մեր ամբողջ արդյունաբերության վերափոխման և գյուղա-
տնտեսության սոցիալիստական վերակառուցման:

Դա այն է՝ ինչ վոր անում ենք մենք այժմ ձեզ հետ միասին:
Գյուղատնտեսության խոշորացման սոցիալիստական ուղին կո-
տնտեսության ու խոշորացման ուղիներն են: Սոցիալիստա-
կան այդ ուղին անսպասելի կերպով դուրս չի թոնել: Վո՞մանք մտա-
ծում են՝ «ահա բայլակիները նոսեցին, նոսեցին և ապա հանկարծ՝
1928-29 թվականներին ծախվեցին համառաբած կուլեկտիվա-
ցումը, կարծես յերկնքից ընկավ»: Վոչ, ընկերներ, այդ ուղին
նախատեսվել էր, կարելի չե ուղղալ ի տեղ մաքուր յարբար նա-
խադրակել ելին Կարլ Մարքսը և Մեքսելը, դեռ շատ տարի ա-
ռաջ: Իսկ նրանցից հետո բանվոր դասակարգի և գյուղացիության
մեր եպիստայի մեծ առաջնորդները՝ Լենինը, Ստալինը և
մեր ամբողջ կուսակցությունը, պայքար մղելով իրենց «սո-
ցիալիստ» անվանող դավաճանների դեմ, շատ և շատ
տարիներ ընթացքում վոչ միայն կոչ են արել դեպի կո-
լեկտիվացումը, այլև մշակել են կուլեկտիվացումն իրագործելու
թեորիան և պրակտիկան: Լենինի կուսակցությունը ղեկներ, թե
ուր և ինչպես պետք է տանել գյուղացիությունը: Նա դիտեր, վոր
հաղթությունը իսկույն չի դա: Նաև շատ մարդիկ, վորոնք իրենց
«սոցիալիստ» են անվանում, մաշվել, վորոնք չաղակրատում են
սոցիալիզմի մասին, իսկ յերբ դործը սոցիալիզմին է հասնում,
դավաճանում են նրան: Նրանք ուղում են, որինակ, դրությունից
դուրս գալ կուլեկտիվներ կազմակերպելով բուրժուական յեր-
կրներում, սակայն կոոպերացիան բուրժուական յերկրներում
կապիտալիզմի միայն մի կցորդն է: Դա զարգացման սոցիալիստա-
կան ուղին չէ, դա միայն խաբեյություն է:

Վերհիչեցե՞ք հսերներին: Նրանք մեծադյուրը կերպով իրենց



անժամանակ եյին սոցիալիստ-հեղափոխական: Կարծես թե ավելի վո-
չինչ պետք չէր՝ և «սոցիալիստներ», և «հեղափոխականներ»:

Յեւ շատ գյուղացիներ 1917 թվականին ընկան այդ թաղաքի
մէջ: Բայց ի՞նչ դուրս յեկավ: Այդ շահագործողներն ու դավաճան-
ները տասնյակ տարիներ խոսքով առաջադրում եյին «հոգ և ազա-
տութիւն» լոգոսնդը, իսկ ի՞նչ դուրս յեկավ իրականում: Յերբ
1917 թվականին ցարին տապալեցին, ապա գյուղացիները այսպէս
հասկացան այդ բանը՝ «ցարին տապալեցին», իսկ այդ ցարն ա-
ռաջին կալվածատերն էր կալվածատերերի մէջ, ուրեմն ցարից
հետո պետք է տապալել նաև բոլոր կալվածատերերին: Այդպէս
հասկացան գյուղացիները և ճիշտ հասկացան:

Իսկ ի՞նչ արեցին եսերները: Յերբ կառավարութեան գլուխը
կանգնեց Կերենսկին, վորը նույնպէս եսեր էր, յերբ հողադործու-
թեան մինիստր դարձավ Չերնովը և ուրիշները—նրանք իշխան
Լվովի հետ միասին, կալվածատերերի հետ միասին, պատմիչ
ընկաւորներ եյին Եւրոպայում ապստամբ այն գյուղացիների դեմ,
վորոնք դրաւում եյին կալվածատերերի շինքերը, կալվածատերե-
րի հողերը:

Կան մի շարք հրամաններ, վորոնք այժմ ծիծաղելի յեն
հնչում, որինակ, նույն այդ Կերենսկու հրամանը, վորը դրել էր,
վոր իբր թե չի կարելի ձեռք տալ ուրիշի սեփականութեանը,
բանի վոր դա մասնավոր սեփականութեան է, և ով ձեռք է տալիս
դրան, հանդես է գալիս հայրենիքի դեմ: Եսերները վորդորմելի
խաղաղեց եյին դարձել կալվածատերերի ու կապիտալիստների
ձեռքին: Նրանք տասնյակ տարիներ շահագործողութեան եյին «հողի և
ազատութեան» մասին, իսկ յերբ բանը դործի հասավ, նրանք դա-
վաճանեցին գյուղացիներին, դավաճանեցին բանվորներին և մեն-
չեկներին ու կալվածատերերի հետ միասին դուրս յեկան բան-
վորների ու գյուղացիների դեմ, սկսեցին բանտ նստեցնել և դժա-
կահարել նրանց: Ի՞նչու համար: Նրա համար, վոր գյուղացինե-
րը, վորոնք դարեւով սպասում եյին հող ստանալու նվիրական
ժամը, ուզում եյին իրականացնել իրենց կամքը և հետ վերցնել
կալվածատերերից իրենց հողը:

Լենինն այլ կերպ էր հասկանում դործը: Նա տեսնում էր բա-
ցատրում էր, վոր գյուղացիութեանն առաջին որը չէ, վոր պա-
-

քարում է իր ազատագրման համար: Գյուղացիութեան պատ-
մութեանը գիտե մասսաների մեծ հեղափոխական շարժումներ:
Այդ պատմութեանը գիտե գյուղացիական հեղափոխական շատ
պատերազմներ: Որինակ՝ Գերմանիայում միջին դարերին, հա-
րյուրավոր տարի առաջ, գյուղացիութեանն անողորմաբար ու հա-
մառորեն պաշարում էր կալվածատերերի դեմ, արյունահեղ
մարտերում: Նա դրաւում էր ազնվականների կալվածները, բայց
գյուղացիութեանը դավաճանեցին:

Մեր մեծ յերկրում ևս գյուղացիութեանը մինչև հեղափոխու-
թեանը քնած չէր: Նա վրաքի յեր կանգնում, առաջ էր քաշում
իր հերոսներին: Գյուղացիական ապստամբութեանների այնպիսի
հերոսներ, ինչպիսիք եյին Բալուտիկովը, Ստեփան Ռադինը, Պու-
գաչովը, կոչում եյին ազնվականների, կալվածատերերի և իշ-
խանների դեմ, մարտի տանելով ընկճված ճորտերին: Դրանք գյու-
ղացիների ապստամբութեաններն եյին, ճորտերի ապստամբու-
թեանները, ճնշման, բռնութեան ու անարդարների դեմ, գեթոյային
տանջանքների դեմ, այն ամենի դեմ, վորն ստեղծել եյին միլիո-
նավոր աշխատավոր գյուղացիների համար տղորակները, կալվա-
ծատերերը, բռնակալները, վորոնք բոլորում եյին գյուղացու հո-
ւին ու մարմինը:

Հարց է ծագում, թե ինչո՞ւ պարտութեան—պարտութեան հե-
տեւից եյին կրում գյուղացիական այդ ապստամբութեանները:
Ինչո՞ւ Ստեփան Ռադինը դրաւելով մի շարք քաղաքներ, ի՞նչու
Պուգաչովը վրաի հանելով Պոլովիսին և Ուրալը, ղլխաւորեցին:
Ինչո՞ւ:

Այդ հարցին պատասխան տվեց Լենինը: Վորովհետև, առաջ
նա, քաղաքում գյուղացիք վատահելի դաշնակից չունեյին, վորով-
հետև գյուղերում ցրված իրենց մանր հողամասերում, զի ու ցան
գյուղացիութեանը փաղափում ղեկավար չունին:

Քաղաքը խորապէս թշնամի յեր գյուղացիութեանը: Բայց ահա
հանդես յեկավ պրոլետարիատը: Հրապարակ բարձրացավ նոր
դատակարգ: Հաղթանակ տանելու համար գյուղացիներին անհրա-
մեջ էր, վոր նրանք ընթանան փաղափ բանվորների հետ—պրոլե-
տարիատի հետ դաշն կնքած, անհրաժեշտ էր, վոր նրանք գրոհ
տային իրենց դատակարգային քշնամիների դեմ պրոլետարիատի
ու նրա կուսակցութեան ղեկավարութեամբ:

Ինչու անհրաժեշտ է այդ ղեկավարութիւնը: Այն պատճառով, վոր բանվորները միացած են, նրանք աշխատում են վոչ թե առանձին փոքրիկ հողամասերում, նրանք ապրում են վոչ թե իրարից ասանյակ վերտոեր հեռու ընկած ճանապարհադուրի փոքրիկ գյուղերում: Բանվորը միացած է գործարանում: Նա մինչև վերջը հեղափոխական է: Նա ավելի կուլտուրական է, վորովհետև հենց դադգյահը, մեքենան ինքը, կուլտուրական վերաբերմունք է պահանջում, և արդունաբերութիւնը նրանից կերտում է ավելի աստջալոր, ավելի հետեւողական հեղափոխական: Քաղաքում պրոլետարները միանում, քաղաքական կազմակերպութիւններ են ստեղծում: Նրանք միջազգային կապեր ունեն մյուս յերկրներէ պրոլետարների հետ: Պրոլետարիատն այն միակ դասակարգն է, վորը կարող է դուրս բերել գյուղացիութիւնը նրա դարավոր խափարից և կազմակերպել նրան վորպես գրոհային բաւալոյններ: Կուլակային սարկութիւն և կալվածատիրական ննջման դիմ պայտարելու համար:

Ահա թե ինչպէս եր հասկանում էինքնը գործը: Լենինը և նրա կուսակցութիւնը, մեր կուսակցութիւնն առաջնորդ Լենինի լավագույն զինակից ընկ. Ստալինը տասնյակ տարիներ շարունակ նախապատրաստում էին մեծ հաղթանակը, աշխատելով պաղտոյնայում, աքսոր գնալով դեպի Սիբիր, բանտ նստելով, կախազան բարձրանալով: Բայլէիկներն իրենց գործն էին անում և նախապատրաստում էին պրոլետարական մեծ հեղափոխութիւնը:

Հեղափոխութիւնը բռնկվեց. միմիայն մի կուսակցութիւն: Գայլէիկների կուսակցութիւնը, Լենինի կուսակցութիւնն առաջ՝ յերեք դուրս գյուղացի յես, ուզում ես հաղթ վերցնել կալվածատերերից, արի բռնվորների հետ, գնամք միասին և՛ կալվածատերերի դիմ, և՛ կալիտալիստների դիմ: Վոչ թե պարզապէս քնա՞ք, վոչ թե հիմնադիր ժողովներում շաղակրատութիւն անեալով գնանք, այլ տասարներ նրանց, վոյնչացնենք, նվաճենք իշխանութիւնը և պարզենք ազատագրված աշխատանքի կարմիր ջրուղը Խորհրդային մեծ յերկրում (յերկարատեւ, ծախիւր):

ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹՅԱՆ ՂԵԿՎԱՐՆ Ե

Նվաճելով իշխանութիւնը՝ նախ և առաջ անհրաժեշտ էր յիւրցնել կալվածատերերից հողը: Միմիայն ՌՍՖՍՀ-ում (առանց ազգային հանրապետութիւնների) չքավոր ու միջակ գյուղացիութիւնն ստացավ կալվածատիրական, յեկեղեցական և արքունի 52 միլիոն հեկտար հող և մոտ 50 միլիոն հեկտար կուլակային հող: Ընդամենը ստացավ նա ավելի քան 100 միլիոն հեկտար հող և ավելի քան կրկնապատկեց մինչև հեղափոխութիւնն իր ունեցած հողի տարածութիւնը: Ուկրայնայում մինչև հեղափոխութիւնը չքավորներն ու միջակներն ունեյին 20 միլիոն գեսյատին հող, իսկ հեղափոխութիւնից հետո նրանց հողը հասավ 35 միլիոն գեսյատին:

Այդ պայքարում պրոլետարիատի հետ միասին գնում էին գյուղացիութիւնն բոլոր հիմնական մասսաները: Յերեք մեծ խումբ ենք բանվորների ու գյուղացիների դաշինքի մասին, առաջ դա դատարկ ֆրազ է: Վոչ ամեն գյուղացի կարող է ամեն ծաւառակ կապիլ այդ դաշինքը: Բանվորների կուսակցութիւնը միշտ նկատի յե առել, թե ինչպիսի գյուղացիներ, յի՛րր, հեղափոխութիւնն վո՞ք ետապին, ինչ լողունգներով կարող են առաջ դնալ դաշն կնքած բանվորների հետ, դաշն կնքած պրոլետարիատի հետ, նրա ղեկավարութիւնը:

Հեղափոխութիւնն հաջորդ ետապում. գյուղացիութիւնն միմասր վոչ միայն տատանվեց, այլև նրա դեմ գնաց: Այդ տեղի ունեցավ այն ժամանակ, յերր Պենդայում ծագեց չեխոսլովակյան ապստամբութիւնը, այդ տեղի ունեցավ այն ժամանակ, յերր գյուղը յերկու բանակի բաժանվեց: Վերհիշեցեք չքավորութիւնն կոմիտեները:

Գյուղում կուլակը մեր դեմ դուրս յեկավ, իսկ չքավորները և միջակների զգալի մասը մեզ հետ գնացին: Շատերը կարծում էին, թե գյուղացիութիւնն կուլակային մասի մեր դեմ դուրս դալը մեր թուլութիւնից էր: Վոչ, դա մեր ուժից էր: Այդ փաստը ցույց տվեց, վոր մեր գյուղում ուժեր կան վոչ միայն կալվածատերերին վոնդելու համար, այլև ուժեր կան բանվորների հետ միանալով՝ վերացնելու նաև կալիտալիստներին: Կալվածատ

տերերին վոնգել չի կարելի առանց վոնգելու կապիտալիստներին : Այդ պետք է հասկանալ : Այս այդ փաստը ցույց տվեց, վոր գյուղացիութունը, հակառակ տրոցկիստների պնդումներին, մեզ հետ միասին ընթանում է սոցիալիստական ուղիով : Հենց այդ եր, վոր հաղթանակ ապահովեց մեզ համար՝ քաղաքացիական պատերազմում :

Միջակը միշտ հատուկ դիրք է գրավել պրոլետարիատի ու գյուղացիութան դաշինքում : Միջակը տատանվում էր : Չֆալդ-Վարը, բարախության հետ միասին, բանվորների ղեկավարությամբ անձնուրաց է աննկուն առաջ եր ընթանում : Նա մեր հեռարանն էր գլուղում : Մեր կուսակցութունը դիտեր միջակի առանձնահատկությունը : Նա դիմեր, վոր միջակը տատանվում է, վորովհետև նա յերկու հողի ունի, մի կողմից՝ դա կոչտուկավոր, աշխատավոր հողին է, ճնշված մարդու հողին, իսկ մյուս կողմից՝ մանր, մասնավոր սեփականատերի, առևտրականի հողին է :

Կուսակցութունը դիտեր, վոր յեթե ճիշտ ղեկավարություն ցուցաբերվի, միջակը կկարողանա վոնջնացնել, վերացնել և տերտերներին հանձնել իր յերկրորդ հողին, մասնավոր սեփականատերի հողին (ծիծաղ) ու պահել աշխատավորի հողին, վորը բանվորների հետ միասին կառուցում է նոր կյանք, նոր սոցիալիստական հասարակություն (ծափեր) :

Այդպես մենք կադմակերպեցինք հաղթանակը քաղաքացիական կռիվներում : Դա շատ գոյար հաղթանակ էր, սակայն այդ հաղթանակը մենք ձեռք բերինք :

Իսկ կալվածատերերին ու կապիտալիստներին ջախջախելը : Ընկերներ, դործի միայն մի մասն է : Սոցիալիզմը պետք է վոր չընչացնի ամեն մի ճնշում : Սոցիալիզմը պետք է հասարակական նոր կյանք ստեղծի : Սոցիալիզմ չի կարելի կառուցել, յեթե կապիտալիզմի ամման համար մնացել են արմատներ, արմատիկներ, հող : Իսկ մանր, գյուղացիական տնտեսությունը միշտ հանդիսացել է և հանդիսանում է կապիտալիզմի ամման արմատիկը : Վորեն գյուղացի համաձայն չլինելով դրան, կասի՝ ճներեցեք, յիս ի՞նչ կապիտալիստ եմ վոր, չե՞ վոր յես աշխատավոր եմ, միջակ եմ :

Ընկերներ, բանը միջակը չէ, բանն աշխատավորը չէ, բանն այն է, վոր մենք, թողնելով անհատական տնտեսությունը, անխուսափելիորեն, կամա-ակամա թույլ տվինք ազատ առևտրի զարգացումը : Իսկ ազատ առևտրի զարգացումը նշանակում էր առևտրականի զարգացում, սպեկուլյանտի հրապարակ դալը, կուլա-կի առաջանալն ու աճումը :

Սակայն քաղաքացիական պատերազմից հետո չեք կարելի անցնել համայնացմանը, կոլեկտիվացմանը, կոլտնտեսությունների շինարարությունը՝ մասսայական մասշտաբով, վորովհետև մեր տնտեսությունը քայքայված էր : 1921 թվականին մենք մտցրինք նեպը (տնտեսական նոր քաղաքականությունը) : Ի՞նչ բան է նեպը :

Նեպը պրոլետարական պետության հատուկ քաղաքականություն է, վորը նկատի ունի կապիտալիզմի քույրատրու-մը՝ պայմանով, վոր հրամանատարական բարձունքները պրոլետարական պետության ձեռքին գտնվեն, վորը նկատի ունի կապիտալիստական ու սոցիալիստական տարրերի պայքարը, վորը նկատի ունի սոցիալիստական տարրերի ղեքի ամուսնի վնաս կապիտալիստական տարրերի, վորը նկատի ունի սոցիալիստական տարրերի հաղթանակը կապիտալիստական տարրերի վրա, վորը նկատի ունի դասակարգերի վոնջնացումը, սոցիալիստական եկոնոմիկայի հիմքի կառուցումը : Ով չի հասկանում նեպի այդ անցուղիկ, յերկյակ բնույթը, նա հեռանում է լենինիզմից» (Ստալին, 14-րդ կուսհամագումար, 1925 թ., սղադիր հաշվետվություն, էջ 493) :

Թե՛ գլուղում և թե՛ քաղաքում վոմանք սխալ հասկացան նեպը : Նրանց թվումն էյին և՛ անկուսակցականները, և՛ մի քանի կուսակցականներ :

Նրանք այսպես էյին մտածում, ի՞նչ կա վոր, իշխանություն-ներ վերցրին բայլեիկները, ջախջախեցին գեներալներին, իսկ աշխատավոր առևտուր է, անհատական տնտեսություն, առևտրա-կան, սպեկուլյանտ, և դորձն առաջ կգնա այնպես, վոր կամաց-կամաց, աստիճանաբար մեզ մոտ կվերականգնվի հին իրավա-կարգի նման մի բան, նորից կվերածնվի կապիտալիզմը, ազա-

ստեղծելու ճեղղոններն համար և ստրկութիւնն աշխատավորները համար:

Հեղափոխութիւնները զանազան տեսակ են յեղել: Փրանսիայում ևս վաղուց արդեն տապալել են թաղավորներին, գրավել են հողը, իսկ հետո թույլ տվին ազատ տնտեսավարում, թույլ տվին կուլակին զարգանալ: Նորից հրապարակ յեկան կալվածատերերը, առաջ յեկան նոր կապիտալիստներ և գյուղացիութիւնը նորից ճեղղեց: Դա բուրժուական հեղափոխութիւնն էր: Մենք պրոլետարական հեղափոխութիւնն ենք կատարեցինք: Յեւ այդ պատճառով քաղաքացիական պատերազմից հետո համառորեն վերականգնելով մեր տնտեսութիւնը նեպի հիման վրա, մենք միշտ վարել ենք և վարում ենք դարակարգերի լիակատար վաշտացման քաղաքականութիւն: Այդ չեյին հասկանում տրոցկիստները և աջ ուղիներսները, վորոնք յեղել են և մնում են վորսյեռ ետքով չէին այլ ու մենչեիզմի պոչը: Նրանք թշնամի յեն լենինիզմին և բայլչեիզմին:

Ինչո՞ւ, որինակ՝ Տրոցկին գլորվեց մենչեիկներին բանակը: Հակահեղափոխական բուրժուազիայի առաջավոր մարտիկներին բանակը: Նա չէր հավատում պրոլետարիատի ուժին և արհաւիրում էր գյուղացիութիւնը: Նա չէր հավատում մեր հեղափոխութեան ուժերին: Յեւ այդ պատճառով նա դեմ էր մեզ յերկրում սոցիալիզմ կառուցելու լենինյան թեորիային: Տրոցկիստները կարծում էին, վոր առանց դաշն կնքելու գյուղացիութեան հետ, կարելի չէ կառուցել քաղաքում գործարաններ, իսկ գյուղն առաջվա նման պահել թանձր խաւարում: Իսկ աջերն այս պէս էին դատում՝ մեզ նոր գործարաններ պետք չեն, թող զարգանա կուլակութիւնը, լիակատար ազատութիւն առեւտրին: Աջերը ծրագրում էին դաշն կնքած նույնիսկ կուլակի հետ, սոսկ զաւրով կամաց-կամաց, սուսիկ-փուսիկ, ինքնահոսով, առանց պայքարի մտնել սոցիալիզմի թագավորութեան մեջ: Աջ ուղիւ նիստներին այդ ուղին տանում և դեպի կապիտալիզմի զարգացումը, դեպի չքավորի ու միջակի նոր ստրկացումը:

Կուսակցութիւնը և նրա Կենտրոնական Կոմիտեն, նախ և առաջ ընկ: Ստալինը, այդպէս չեյին հասկանում սոցիալիզմի կառուցման գործը: Նրանք հասկանում էին, վոր անհրաժեշտ է

ստեղծել սոցիալիստական ամուր բազա, կառուցել սոցիալիստական շենքի հիմքը: Առանց դրան հնարավոր չէ բարելավել բանվորների ու գյուղացիների դրութիւնը: Առանց դրան հնարավոր չէր դուրս բերել յերկիրը սոցիալիզմի լայն մասնապահը:

Մերժելով ամեն տեսակ տառանդներ, վորք զնեւով ամբողջ ճակատով կատարվող սոցիալիզմի ծավալուն արշավի ուղին, մենք հրապարակ դրինք տեխնիկական հետամնաց մեր յերկրի ինդուստրացման մեծ պլանը: Մենք լայն ճակատով առաջ տարանք կալեկտիվացումը, նախապատրաստեցինք անցումը համաւարած կալեկտիվացման և նրա հիման վրա կիրառեցինք կուլակութեան, վորպէս դասակարգի, վերացման քաղաքականութիւնը: Մենք համառորեն ու համբերութեամբ, քաջ առ քաջ հող նախապատրաստեցինք կուլեկտիվացումն իրականացնելու համար:

ԻՆՉՊԵՍ ԵՆՔ ԻՐԱԿԱՆԱՅՐԵԼ ԿՈԼԵԿՏԻՎԱՅՈՒՄԸ

Ինչո՞ւ չի կարելի բարեւալել գյուղացիների դրութիւնն առանց կուլեկտիվացման: Հոկտեմբերյան հեղափոխութիւնը հող տվեց գյուղացիներին: Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո հողագործի շատ գյուղացիներ հող ստացան: Մյուս կողմից՝ գյուղացիները հող ստանալով, սկսեցին բաժանել: Հեղափոխութիւնից հետո ել ավելի մեծացավ մանր գյուղացիական տնտեսութիւնների զանաւոր: 1916 թվի 20 միլիոն գյուղացիական տնտեսութիւնների փոխարեն 1927 թվականին մեզ մօտ կար 25 միլիոն 500 հազար մանր գյուղացիական տնտեսութիւն: Մի՞թե կարելի չէր այդ մանր և մանրագույն գյուղացիական տնտեսութիւններում գործածել մեքենաներ: Մի՞թե կարելի չէր բարեւալել և հեշտացնել աշխատանքը: Բայց, ընկերներ, հասկացե՛ք, վոր գյուղացիները հեղափոխութիւնից հետո դարձնեցին, բարձրացավ նրանց դիտակցութիւնը, առաջ յեկավ արժանապատիւթեան գլուխը:

Գյուղացին չի ուզում այլևս աշխատել հին ձևով: Անհրաժեշտ էր յեւք գտնել դրութիւնից: Նրանք հո հալիտյան չպե՞տք և ապրելին ախպէս, ինչպէս ապրել են հարյուրավոր տարիներ առաջ: Նրանք հո հալիտյան չպե՞տք և աշխատելին գերանդիով, մանդալով, արորով: Անհրաժեշտ էր վորեւէ յեւք բանալ միլիոնավոր

աշխատավոր գյուղացիութեան համար գեղի պայծառ ապագան: Յեթն վոչ այսօր, գեթ յերկու տարուց, յեթե վոչ յերկու տարուց, գոն հինգ տարուց: Զի կարելի թողնել գյուղացիութեան անթափանց խավարում, ծանր, հյուսիս աշխատանքի սոսկալի պայմաններում: Անհրաժեշտ եր արմատից կտրել գյուղի վայրենութեանը, անկուլտուրականութեանը, վերաբերել հետ հնարավոր լինել բոլորովին վոչնչացնել դրանք:

